

ԼԵՈՆԱՄԵՐՉ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 30 » հունվարի 2019թ.

գ. Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2018թ.-ի տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին : Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2018 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 1956.7 հազար դրամ գումար , որը կազմում է 2018 թվականի տարեկան բյուջեի կատարողականի 93,6% -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 479,3 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 883,2 հազար դրամ

գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 84,2 հազար դրամ

դ/ Պետության կողմից դոտացյա 9853,6 հազար դրամ

ե/ տեղական տուրքեր 81,5 հազար դրամ

զ/ տեղական վճարների դիմաց 389,9 հազար դրամ:

է/ Ֆոնդային բյուջե 499,1 հազար դրամ:

Համայնքում սեփական եկամուտների տոկոսը կազմում է 93,6% որը բավարար ցուցանիշ է:

Համայնքի բնակիչներին գյուղապետարանի աշխատանքների մասին իրազեկելու համար համայնքում տեղադրված թվով 1 ցուցատախտակների վրա փակցվել են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները և ավագանու որոշումները:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

## 2. Պաշտպանության բնագավառում

Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչճից խուսափոխ թվով 6 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի ամոթ է զորակոչից խուսափելը:

## 3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության:

## 4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակութային հողերը:

2018 թվականին հաստատվել է հողային հաշվեկշիռը ավագանու կողմից, կատարվել է ցանքերի հաշվառում:

Հաշվառվել է բնակչությանը պատկանող անասունների և թռչունների գլխաքանակը:

## 5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը, բայց տարվում են աշխատանքներ գյուղամիջյան ճանապարհը որի երկարությունը 1 կմ. է ընդգրկել որևէ ծրագրի մեջ, որպիսի կառուցվի :

2018թվականի ընթացքում համայնքի փողոցները բարեկարգվել է:

## 6. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ:



ա/ բուժկետից օգտվել են՝ 895 բնակիչներ

բ/ տնային կանչեր 268

գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 98 բնակիչների այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար

դ/ 2018 թվականի տարվա ընթացքում ծնվել են 3 երեխաներ

Բուժ կետի աշխատանքները համարում են բավարար, չկան բողոքներ:

7. 2018 թվականի բյուջե

2018 թվականի համայնքի վարչական բյուջեն կազմում է 11943,1 հազար դրամ:

2018 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ ծրագրերը.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 11613,1 հազար դրամ
2. Աղբահանություն 330,0 հազար դրամ
3. Ֆոնդային բյուջե 499,1 հազար դրամ

#### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Համայնքի գազաֆիկացում
3. Տերմինալի տեղադրում
4. Գյուղապետարանի շենքի բացակայություն
5. 1 կմ համայնքային ճանապարհի կառուցում



Համայնքի ղեկավար

 Վ. Միրզոյան